

Անհամբեր Սպասուած Ամիսը

Յուլիս 22, 2023 | Անդրադարձ

Դիմում 0



Like 120

ԿԱՐԷՆ ԾԻՆՊԱՇԵԱՆ

Ահա արդէն յունիս ամիսն այլ բոլորեցինք, եւ արդ, կը դիմաւորենք յոլիսը՝ անհամբեր սպասելով անոր ընկերակցող արձակուրդն ու հանգիստը: Սակայն աշխարհի չորս ծագերուն ուր կարելի է գտնել բուռ մը հայեր, որոնք հիմնած են գաղութներ, հայկական վարժարաններ ու հայկական մշակութային կեդրոններ, այլ պատճառով հմայուած կը սպասեն այս ամիսը. այս վերջիններս կը սպասեն այս ամիսը, որովհետեւ կ'ամբողջացնեն իրենց դպրոցական տարեշրջանը, զոր կը փակեն տարեվերջի ասարտական հանդէսով, ուր ամբողջ տարուան ընթացքին աշակերտները բեմի վրայ կը ներկայացնեն իրենց ամբարած գիտելիքներէն բաժին մը:



Այս տարի բախտաւորութիւնը ունեցայ ներկայ գտնուելու ֆրանսահայ համայնքի հայկական վարժարաններէն մէկուն ասարտական հանդէսին: Արդէն իսկ առաջին վայրկեանէն, նախքան վարագոյրներուն բացուիլը, անսպասելի զգացական հարուած մը ստացայ, երբ միջնակարգի զոյգ մը աշակերտներ խօսք առին ու երկլեզու ներկայացուցին իրենց տարեկից արցախցի քոյր-եղբայրներուն դաժան պայմաններու տակ գտնուելու իրականութիւնը եւ իրենց զօրակցութեան պատրաստակամութիւնը:

Եթէ այսքանը բաւարար չէր՝ արցունք հոսեցնելու հանդիսատեսներուն աչքերէն, կը նշանակէ, որ անոնք օժտուած են անզգամութեան գերբնական կարողութիւններով, սակայն նոյնիսկ այս կարողութիւնները մէկդի կը դրուին, երբ հանդէսի ամբողջ ընթացքին ականատես կ'ըլլան, թէ ինչպէ՛ս ազգային ոգին, հայկականութիւնն ու հպարտօրէն էականացուող հայեցիութիւնը դրոշմուած է երեխաներուն մտքերուն մէջ:

Երեխաները անխտիր կը սնանին մեր դարերով զարգացած հայկական մշակոյթով, իրենց մտքերուն մէջ կենդանի կը մնան՝ Թումանեանը, Կանաչեանը, Մուշեղ Իշխանը եւ բազմաթիւ ուրիշներ: Ինչպէ՛ս կրնամ վստահ ըլլալ՝ կ'ըսես: Շատ պարզ է: Երբ նոյնիսկ հեռուէն կը շլանամ լուսաստղի պէս շողշողացող հուրէն ու կրակէն: Իրաքանչիւր «Հայաստան» եւ կամ «Արցախ» գոչելուն, արդէն իսկ հօր լոյսը կը բազմապատկուի եւ ատելի ուժգին կը փայլի անոնց աչքերուն ու հոգիներուն մէջ: Երբ կը տեսնեմ, որ իրենց տակաւին փոքր բռունցքները օղը կը հարուածեն ըսելու համար, որ իրենք կը մերժեն ընդունիլ որեւէ ուրիշ երկիր՝ իբրեւ հարազատ հայրենիք: Տեսնելով այս բոլորը՝ կարելի չէ նոյնիսկ դոյզն կասկած ունենալ մեր ապագայ սերունդին ազգասիրութեան գոյութեան վերաբերեալ:

Ուրեմն այս ամէնը տեսնելէ եւ նոր սերունդին անմար կրակը վկայելէ ետք, կը մնայ միայն մէկ հարցում, զոր պէտք է ուղղենք մենք զմեզ: Ինչպէ՛ս կարելի է տակաւին մնալ թուլամորթ ու կրատրական: Ինչպէ՛ս, իբրեւ այսօրուան չափահաս եւ գիտակից հայորդի, հանգիստ խղճով մխրճուիլ առօրեայ կեանքին մէջ՝ խուլ ականջ դարձնելով հայրենիքին կանչերուն: Երբ օրական ձեր զաւակներուն աչքերուն մէջ կը նայիք, չէ՞ք տեսներ այդ հուրը, չէ՞ք տեսներ անոնց ազգասիրութիւնը, չէ՞ք ոգեւորուիր այդ անյաղթելի կեցուածքէն: Ինչպէ՛ս մենք մեզ կը թոյլատրենք անտարբեր նստիլ ու հանգստանալ, երբ մեր զաւակներուն հոգիներուն մէջ կ'այրի Հայաստանի եւ Արցախի տենչը: Ինչպէ՛ս մենք մեզի իրաւունք կու տանք ոտնակոխելու իրենց արդարացի երազը:

Սորվինք մեր երեխաներէն, ներշնչուինք իրենց յեղափոխականութենէն, սնանինք իրենց անչափ ուժով ու պայքարի ոգիով եւ դառնանք այդ «նախնիները», որոնց մասին պարծանքով կրնան խօսիլ եւ ըսել. «Կը յիշեմ, երբ հայրենիքը վտանգի տակ էր՝ մահամերձ օգնութեան կը սպասէր, իրենք էին, որ հասան օգնութեան եւ փրկեցին զայն՝ մեզի իրաւունք տալով, որ ունենանք հայրենիք, եւ մենք այսօր կարենանք հպարտօրէն մենք մեզ անուանել հայ»:

Լսեցէ՛ք ձեր զաւակներուն աղերսանքը: Մոիկ ըրէ՛ք անոնց պահանջները: Փրկեցէ՛ք մեր հայրենիքը: Լռութիւնը ինքնին պատասխան է: Մի՛ մնաք լուռ: Հասէ՛ք Արցախ: Հասէ՛ք Հայաստան: Ձեր զաւակներուն ամբողջ յոյսը ձեր վրան է: Մի՛ լքէք զիրենք յուսախաբ առանց տուն, առանց հայրենիք:

Նախորդը

Փաշինեան Կը Սիալի՝ Մտածելով, Որ Հայաստան Համաձայնած Էր Մեղրին Փոխանակելու Արցախով

Յաջորդը

Լիզպոնի Գործողութեան 40-Ամեակ. Երգի Մը Պատմութիւնը. Հայ Դատի Պահանջատիրութեան Ուխտապահներու՝ Լիզպոնի Հինգի Յիշատակը Յանրժացնող Երգերուն Պատգամները

Related Posts



Եւմար. Հակա-Սարդարապատ

Օ ՄԱՐՏ 28, 2024



Մտքեր – 6. Սփիւռքի Կարողական Ուժին Մասին

Օ ՄԱՐՏ 28, 2024



Վայրէջքը Կասեցնել Է Պէտք

Օ ՄԱՐՏ 27, 2024

Leave a Reply

Your email address will not be published. Required fields are marked *

Comment *

Name *

Email *

Website

POST COMMENT